

## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ
## (23 Նոյեմբերի 1986 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, ամէն»:

«Եկայք շինեսցուք սուրբ պխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի» (Շարական):

Սիրելի հավատացյալներ, եկեք միասին կառուցենք, բարեկարդենք, փառաբանենք լուսո սուրբ խորանը, որովհետև դրանով մեզ լույս ծագեց Հայաստան աշխարհի վրա:

Այս խոսքերով, այս երգով մենք հաճախ փառաբանում ենք մեր սուրբ խորանը, լուսո մեր եկեղեցին, որովհետև հավատում ենք, թե դրանով, այդ լուսե խորանով ծագեց լույսը մեր աշխարհի վրա, հայ ժողովրդի վրա: Մեր ժողովուրդը Սուրբ Գրիգոր Լուսավորչի և Տրդատ թագավորի երանելի օրերից՝ չորրորդ դարի սկզբից, ընդունեց լույս հավատքը քրիստոնեական, հեռացավ հեթանոսական խավարից և եկավ, իր սիրտը բացեց Քրիստոսի Ավետարանին, ճշմարիտ լույսին, որով մեր ազգը վերածնվեց, կերպարանափոխվեց, պայծառակերպվեց և դարձավ նոր ժողովուրդ, նոր որակի բարձրության հասավ և այդպես կերտեց իր ողջ պատմությունը ահա մոտ երկու հազար տարիներից ի վեր: Մեր ազգը իբրև ազգություն, անշուշտ, կար, գոյություն ուներ նաև քրիստոնեությունից առաջ, բայց իսկական ազգային դիմագծությունը մեր ժողովուրդը ստացավ մանավանդ քրիստոնեության ընդունումից հետո: Եվ ոչ միայն ազգային դիմագծություն և նկարագիր, այլ նաև այդ նկարագրով հայ ժողովուրդը գտավ իր կյանքի, իր ստեղծագործ կյանքի նոր ճանապարհը, դարձավ մշակույթ ստեղծող և մշակույթ կրող ժողովուրդ աշխարհի պատմության հորիզոնի վրա: Եվ այսօր եթե մենք հպարտանում ենք մեր ազգությամբ, մեր պատմությամբ, մեր մշակույթի արժեքներով, մեծավ մասամբ պարտական ենք այն լույսին, այն լույսի խորանին, որ բարձրացավ Հայոց հողի վրա և բաշխեց իր շնորհները համայն մեր ազգի զավակներին:

Այսօր մեր ժողովրդի կյանքի պայմանները հիմնովին փոխվել են անշուշտ: Մենք չենք ապրում այնպես, ինչպես ապրում էին մեր նախնիք հազար տարի, երկու հազար տարի առաջ՝ ընկերային, տնտեսական, վարք ու բարքի, ապրելակերպի, նույնիսկ մտածելակերպի տեսակետներից: Սակայն, այնուամենայնիվ, ստեղծագործ լույսի այդ սկզբնական ճառագայթը մնում է պայծառ մեր օրերին էլ, և մեր այսօրվա կյանքի ճանապարհի վրա էլ: Այս ձևով մենք ամուր կերպով հաստատ ենք պահում կապը, սրբական կապը ներկայի և անցյալի միջև: Այդպես է, որ մենք տեսիլքը ունենք նաև մեր ապագայի, մեր ապագա նորանոր նվաճումների և հաջողությունների: Այդպես է, որ այսօր մեր մայր երկիրը՝ Սովետական Հայաստանը, գտնվում է բարգավաճ և լուսավոր կյանքի ճանապարհին և կերտում է ոչ միայն իր ներկան, այլ նաև ներկայի միջոցով ավելի լուսավոր և պայծառ ապագան: Մնում է մեզ աղոթել, որպեսզի Աստված այս լույսը անպակաս անի մեր կյանքից, որ այդ լույսի աղբյուրը մնա միշտ հաստատ և անապառ: Մաղթում ենք և աղոթում նաև, որ մեր կյանքի խաղաղությունը պահպանվի, չխանգարվի, և համայն աշխարհի խաղաղության պայմաններում մեր փոքրիկ ազգն էլ սովետական եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքում շարունակի իր ծաղկումի ճանապարհը:

Սիրելի ժողովուրդ, մեր Ս. Եկեղեցու մասին է հիմնականում խոսքն այսօր: Փառք Տիրոջ, ուր էլ որ գտնվել են հայերը՝ և Հայաստանում ու արտասահմանում, այնտեղ նախ և առաջ, նույնիսկ իրենց սեփական տները կառուցելուց առաջ, կառուցել են իրենց լուսո խորանը, այսինքն՝ իրենց եկեղեցին: Հենց այս օրերին նոր երկու եկեղեցիներ հիմնվեցին Եվրոպայում: Մեկը՝ Բելգիայի մայրաքաղաքում՝ Բրյուսելում: Այնտեղ ապրում են հազիվ հազար-հազար հինգ հարյուր հայեր: Բայց այդ փոքրաթիվ հայերը արդեն կազմակերպվել, մեծ գումար վճարելով արդեն հողամաս են գնել Բրյուսելում և եկեղեցու հիմնարկեքը կատարել անցյալ կիրակի: Ահավասիկ, մի նոր լուսե խորան ևս, որ բարձրանում է Եվրոպայի կրծքի վրա: Երկրորդ մի եկեղեցի Հոլանդիայի մայրաքաղաքում՝ Ամստերդամում: Հսկայական քաղաք է Ամստերդամը: Այնտեղ էլ փոքրաթիվ հայեր են ապրում: Այնտեղ էլ բացվեց, կամ շուտով կբացվի հայկական նոր մի եկեղեցի: Իրականության մեջ այդ եկեղեցին իբրև շենք նոր չէ: Այդ շենքը կառուցվել է 17-րդ դարում, երբ այնտեղ որոշ թվով հայեր եղել են Պարսկաստանից, Ջուղայից գաղթած: Եվ այդ փոքրաթիվ հայերը այդ ժամանակներին ստեղծել են նյութական միջոցներ և կառուցել են Ամստերդամի հայոց եկեղեցին: Բայց հետո այդ փոքրաթիվ հայերը ցրվել են, և եկեղեցին դադարել է գործելուց իբրև հայկական եկեղեցի և ծառայել է այլ նպատակների: Մինչև վերջերս նա մի տեսակ որբանոց էր հոլանդացիների համար: Վերջին տարիներին բանակցություններ վարվեցին և նրանք փոխադրվեցին ուրիշ շենք: Որոշ գումար վճարելով, հայերը կարողացան վերստին ստանալ այդ շենքը, որպեսզի շուտով նա էլ իր դռները բաց անի հայ հավատացյալների համար: Ահավասիկ ինչպես հայ ժողովուրդը, ուր էլ որ գտնվելիս լինի, չի կարող ապրել առանց այդ լուսո խորանի: Նաև մեր երկրում մենք աշխատում ենք վերանորոգել, շենացնել մեր աղոթքի տները, հենց սկսած Մայր տաճարից: Գիտեք, վերջին 20—30 տարիներին լուրջ շինարարական աշխատանք ծավալվեց, մեր պետական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքով, և մենք այսօր ունենք բարեկարգ, բարեպարդ եկեղեցիներ, վանքեր, որտեղ ամեն կիրակի և ամեն օր կրոնական, եկեղեցական պաշտամունքներ են տեղի ունենում:

Այդպիսի մի փառավոր եկեղեցի ունենք նաև մենք մեր հայրենիքի երկրորդ քաղաքում՝ Լենինականում: Դուք երևի բոլորդ էլ այցելել եք Լենինական քաղաքը, տեսել եք Ս. Աստվածածին Մայր եկեղեցին, որ պատմական հին եկեղեցի է և այսօր բարեկարգ վիճակի մեջ է, շեն և պայծառ: Նրա հոգևոր առաջնորդը՝ Նարեկ եպս. Շաքարյան, մեծ վաստակ ունի այդ տեսակետից այնտեղ, ուր վերջին տարիներին նվիրումով աշխատեց՝ սիրված ժողովրդի կողմից: Նա այսօր այստեղ պատարագ է մատուցում: Նարեկ սրբազանը իր հետ բերեց իր երգչախումբը՝ Լենինականի երգչախումբը, որ այսօր պատարագի երգեցողությունները կատարում է Կոմիտասյան եղանակմամբ, իմ կարծիքով, շատ բարեհաջող կերպով, հանգիստ, խաղաղ, ճաշակավոր, իսկապես աղոթքի նման, ինչպես վայել է տաճարի կամարների տակ երգեցողությունը կատարել: Ես շնորհավորում եմ երգչախումբը ամբողջությամբ, շնորհավորում եմ մասնավորապես ղեկավարին: Մաղթում եմ ձեզ քաջառողջություն և նոր հարատևության ոգի, որպեսզի հոգևոր ներշնչանքով շարունակեք պայծառ պահել ձեր աղոթքի տունը Լենինականում: Մեր օրհնությունը ձեզ բոլորիդ:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, կամենում եմ ձեզ էլ ուղղել իմ սրտից բխած բարի մաղթանքները ամենքիդ քաջառողջության և արևշատության համար, ձեր ընտանեկան հարկերի տակ խաղաղության, ձեր աշխատանքի վայրերում հաջողության և ձեր ընտանեկան երջանկության համար: Թող Տերը միշտ անապան պահե հայոց աղոթքի տները, հայոց լուսո խորանները, այժմ և հավիտյանս, ամեն: